№10

Մենք հավասար ենք

Տեղեկատվական թերթիկ

Նոյեմբեր 2008

Unison

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության
«Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Կառուցողական հայացք հաշմանդամությանը

Հոկտեմբերի 31-ին Արտաշատի թիվ 5 դպրոցում անցկացվեց «Հաշմանդամությունը Հայաստանում. իրավիճակի բարելավման հեռանկարներ» թեմայով կլոր սեղանքննարկում: Ակտիվ մասնակցություն էին ցուցաբերել Արարատի մարզպետարանի, Արտաշատի քաղաքապետարանի, տեղական ՀԿ-ների ներկայացուցիչները:

Քննարկվող խնդիրները արդիական էին բոլոր ներկաների համար. հաշմանդամների զբաղվածություն, հանրային նշանակության կառույցների մատչելիություն, հասարակության իրազեկվածություն:

Միջոցառումը «Ունիսոն» ՀԿ-ի կողմից այս տարի մարզերում իրականացվող քննարկումների շարքում նախավերջինն էր: Այն կեզրափակվի նոյեմբերի 11-ին Աշտարակում կայանալիք կլոր սեղանով, որտեղ ևս ակնկալվում է բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցություն:

Իրավիճակի վերաբերյալ ստացված տվյալների վերլուծության հիման վրա կմշակվի համապատասխան գործողությունների ծրագիր, որը կիրացվի հետագա ամիսների ընթացքում: Ամենակարևորը, տեղական ՀԿ-ների և պետական մարմինների հետ համագործակցության հիմքն արդեն դրված է:

Հաշմանդամի իրավունքների պաշտպանության նախադեպ

Շուրջ 2 ամիս տևած դատավարության արդյունքում դատարանը բավարարեց սայլակավոր հաշմանդամ Նատալյա Պրիսեցկայայի հայցը S7 («Սիբիր») ավիաընկերության դեմ: Դեպքը տեղի էր ունեցել հունիսի 30-ին Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանում: Պրիսեցկայան հաշմանդամների «Պերսպեկտիվա» հասարակական կազմակերպության Հյուսիսային Կովկասում ծրագրի ղեկավարն է: Նա պետք է մեկներ Վլադիկավկազ, ընդ որում դա Նատալյայի համար առաջին ուղևորությունը չէր: Հեշտ է պատկերացնել նրա զարմանքը և զայրույթը, երբ ստյուարդուհին հրաժարվեց օդանավ նստեցնել նրան:

Արդյունքում Նատալյան օգտվեց այլ ավիաընկերության ծառայություններից, իսկ Մոսկվա վերադառնալուն պես որոշեց հետամուտ լինել իր իրավունքների պաշտպանությանը: Դատարանում Նատալյայի շահերը ներկայացրեց Սպառողների միությունների միջազգային համադաշնությունը, որը պահանջում էր 1 միլիոն ռուբլի փոխհատուցում: Ավիաընկերության իրավաբանները չէին ընդունում հայցի պահանջները, հիմնավորելով, որ սայլակավոր հաշմանդամին առանց ուղեկցողի օդանավ նստեցնելու իրենց գործողությունները միանշանակորեն բխում էին ՌԴ Արդարադատության նախարարության կողմից հաստատված դաշնային ավիացիոն կանոններից:

Որպես հակափաստարկ Պրիսեցկայայի ներկայացուցիչները հղում կատարեցին Սահմանադրությանը, որտեղ հստակորեն նշված է, որ մարդու իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, մինչդեռ կանոնները ոչ ավելին քան նորմատիվ ակտ են:

Հայցվորի փաստարկները դատարանը համարեց առավել համոզիչ և ըստ այդմ բավարարեց հայցը, միևնույն ժամանակ իջեցնելով փոխհատուցման գումարը մինչև 50 հազար ռուբլի: Բացի դրանից, ավիաընկերությունը պետք է վճարի 25 հազար ռուբլու չափով տուգանք:

Նատալյան և նրա համախոհները հույսով են, որ այս նախադեպը հետագայում թույլ կտա զերծ մնալ իրավունքի խախտումներից և խտրականության տարրեր պարունակող կանոնները կվերացվեն:

Հրատարակումն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի
Հայաստանյան մասնաճյուղի և Նիդեռլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

Իրավաբանի անկյուն
Հարց և պատասխան

Ինչպիսի՞ դրամական օգնություն և արտոնություններ են տրամադրվում հաշմանդամ զինծառայողներին:

Կ.Փիլիպոսյան, 37 տ., ք. Սևան

Դրամական օգնությունը տրամադրվում է հետևյալ չափերով՝ հաշմանդամ զինծառայողին՝ ամսական 7500 դրամ, զոհվածի ընտանիքին՝ ամսական 7500 դրամ, իսկ եթե ընտանիքի անդամների թիվը 5-ից ավելի է, ապա 5-ից ավելի անդամ ունեցող ընտանիքի յուրաքանչյուր անձի հաշվով լրացուցիչ տրվում է 2500-ական դրամ:

Զոհվածի ընտանիքի բոլոր անդամների համար նշանակվում և վճարվում է մեկ ընդհանուր դրամական օգնություն:

Ընտանիքի անդամի պահանջով դրամական օգնության նրա բաժինը համամասնորեն առանձնացվում և վճարվում է առանձին: Դրամական օգնությունն առանձնացվում է այն ամսվան հաջորդող ամսվա սկզբին, երբ ստացվել է առանձնացման մասին դիմումը:

Դրամական օգնությունը նշանակվում է համապատասխան մարմնի սոցիալական ապահովության խնդիրներն իրականացնող ստորաբաժանման կողմից) հաշմանդամ զինծառայողի կամ զոհվածի ընտանիքի կողմից լիազոր մարմին անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին գրավոր դիմում ներկայացվելու դեպքում:

Դրամական օգնություն ստանալու համար հաշմանդամ զինծառայողը դիմումի հետ միասին լիազոր մարմին է ներկայացնում անձը և իր կարգավիճակը հաստատող փաստաթղթեր ու տեղեկանք բնակության վայրից:

Զոհվածի ընտանիքը դրամական օգնություն ստանալու համար՝ դիմումի հետ միասին լիազոր մարմին է ներկայացնում զոհվածի ընտանիքի անդամ ու զինծառայողի զոհված (մահացած) լինելու վերաբերյալ փաստաթղթեր և տեղեկանք ընտանիքի անդամի (անդամների) բնակության վայրից:

Պետությունը երաշխավորում է ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիների, զոհված (մահացած) զինծառայողների երեխաների ընդունելությունը պետական ուսումնական հաստատություններ՝ անցյալից դուրս, պետական բյուջեի միջոցների հաշվին:

<< պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների պատճառով հաշմանդամ դարձած զինծառայողներին և ազատամարտիկներին իրավունք է վերապահված՝ բժշկի դեղատոմսով դեղորայք անվճար ստանալու և պետական բուժական հիմնարկներում արտահերթ և անվճար սպասարկվելու, անվճար ձեռք բերելու պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, տարին մեկ անգամ անվճար ձեռք բերելու առողջարանային ուղեգիր, անվճար և արտահերթ հեռախոս տեղադրելու, դպրոցական և նախադպրոցական հիմնարկներում երեխաների վարձը վճարելու 50 տոկոս զեղչով:

Իզաբելլա Կարապետյան,
«Ունիսոն» ՀԿ իրավաբան

Հաղթահարված բարձունքներ

Ամեն ինչ սկսվեց կես տարի առաջ, երբ Մատվեյ Շպարոյի «Արկած» ակումբի թիմը երեք սպինալ հաշմանդամների մասնակցությամբ էլբրուսում անցկացրեց գլխավոր փորձը նախքան Հյուսիսային Ամերիկայի 6195մ բարձրությամբ Մակ-Քինլի գագաթի նվաճումը:

Յակով Լոնդոնը «Նովոսիբիրսկ» պետական ռադիոհեռուստաընկերության նախագահը, գտնվում էր այդ ժամանակ իր հարազատ քաղաքում և լեռնագնացության նման հերոսությունների մասին չէր մտածում: Երեք տարի առաջ մահափորձի արդյունքում նրա մոտ վնասվել էր ողնուղեղը, և սայլակը դարձավ երիտասարդի տեղաշարժման միակ միջոցը:

Մի անգամ Յակովը հեռուստատեսությամբ տեսավ «Արկած» ակումբի անդամների լեռնային պարապմունքների մասին հաղորդումը, որը նրա մոտ առաջացրեց խելահեղ միտք՝ նվաճել էլբրուսի արևմտյան գագաթը: Հարկ է նշել, որ նա նախկինում ոչ սպորտով, ոչ էլ լեռնագնացությամբ չէր զբաղվել: Այնուամենայնիվ, ակումբի բժիշկ Անատոլի Սոբոլևը դրականորեն արձագանքեց այս մտահղացմանը:

Յակովի համար մշակվեց երկամյա անհատական պարապմունքների բավականին բարդ ծրագիր և հանքավիտամինային սննդի հատուկ կուրս:

Ոչ-հաշմանդամին էլբրուս բարձրանալու համար, որպես կանոն, բավական է 5 օր օդին ընտելանալու և 3-4 օր՝ բարձրանալու համար: Յակով Լոնդոնի արշավը պլանավորված էր անցկացնել 19 օրվա ընթացքում, որին անբարենպաստ եղանակի դեպքում կգումարվեր ևս 9 օր:

Պատմության մեջ դա առաջին դեպքն էր. էլբրուսի արևմտյան գագաթը նվաճեց մի մարդ, որն առօրյա կյանքում տեղաշարժվում է սայլակով, իսկ Եվրոպայի բարձրագույն կետին հասավ միայն իր ձեռքերի ուժի շնորհիվ:

Գագաթն հասնելուն պես Յակովը առաջին հերթին զանգահարեց Նովոսիբիրսկում գտնվող 4-ամյա որդուն: Մանչուկը գուցե լիովին չգիտակցեց իր հոր խիզախ արարքը, սակայն երբ Յակովին հարցնում են, թե հանուն ինչի դիմեց այդ քայլին, նա մշտապես պատասխանում է. «Հանուն իմ որդու, որպեսզի նա ինձանով հպարտանա»:

Ուշադրությունն

Առաջին անգամ Հայաստանում «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը անցկացնում է **աշխատատեղերի տոնավաճառ հաշմանդամների համար**, որը տեղի կունենա

նոյեմբերի 25-ին, ժ. 11^{00}-16^{00}, Մարիոթ հյուրանոցում:

Մուտքն ազատ է:

Տեղեկությունների համար զանգահարել **(010) 522170** հեռախոսահամարով

Նախագիծն իրականացվում է Ազգ հասարակության հասանելիության և Դիմորդների Կառավարության Չինաստանի միջոցներով

Գլխավոր խմբագիր
Արմեն Ալավերդյան

Հրապարակումը պատրաստեցին
Դավիթ Բաբայան
Մարիաննա Չալիկյան
Իզաբելլա Կարապետյան

Հասցե՝ «Ունիսոն» ՀԿ, Երևան 0002, Դեմիրճյան 36
Հեռ./ֆաքս՝ (010) 52-21-70
Վեբ-կայք՝ www.unison.am
էլ. փոստ՝ unison@unison.am